ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասը, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 7 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՐՈՇԵՑ

1.Քաղաքացի ------ի դիմումը բավարարել մասնակի՝

1) հաստատված համարել «Գրիգոր Նարեկացի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ավագ բուժաշխատող Ասթինե Հակոբյանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ, 4-րդ, 6-րդ ենթակետերով սահմանված բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման փաստը և առաջարկել ՀՀ առողջապահության նախարարին ավագ բուժաշխատող Ասթինե Հակոբանին ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն նկատողություն տալու առաջարկությամբ դիմել նրա գործատուին՝ «Գրիգոր Նարեկացի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իրավասու անձին.

2) մերժել դիմումը բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման բացակայության հիմքով՝ ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 1-ին, 3-րդ, 6-րդ ենթակետերի, 3-րդ կետի 1-ին, 5-րդ ենթակետերի պահանջների մասով՝ խախտումներ չհայտաբերելու հիմքով.

3) մերժել դիմումը ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի, 3-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջների խախտման մասով՝ դրանք քրեական պատասխանատվություն նախատեսող արարքներ հանդիսանալու հիմքով: